Ողջու՛յն, սիրելի՛ ընկեր,

Անունս Ֆուադ է: Ես ուսանող եմ և ներկայումս ապրում եմ Բաքվում: Կյանքով լեցուն ու դրական երիտասարդ եմ: Ինձ համար «պատերազմում հաղթողներ չեն լինում, լինում են կորցնողներ և ավելի շատ կորցնողներ»: Այդ պատճառով էլ կարծում եմ, որ խաղաղությունը միակ ուղին է մարդկանց՝ համատեղ ու բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Մեր երկրների հարաբերությունները բացասական ազդեցություն ունեն մի շարք ոլորտների վրա, այդ թվում՝ ազգամիջյան երկխոսություն, տնտեսական ու քաղաքական ոլորտների:

Ռազմական ոլորտին հատկացվող ծախսերը կարող էին հատկացվել կրթությանը: Եթե սահմանները բացվեն, իրենց բնօրրանը լքած ադրբեջանցիները կկարողանան ազատ այցելել իրենց բնակավայրերը, իսկ տնտեսական տեսանկյունից կզարգանա երկրների միջև առևտուրը: Դեռ մանկությունից դպրոցում, ընտանիքում, հասարակության մեջ հակահայկական մտքեր են մեզ մատուցվել և դեռ շարունակվում են մատուցվել: Դրա հետևանքով առաջանում են մի շարք կարծրատիպեր ու ներքին արհեստական ատելություն: Ուրեմն նախ և առաջ պետք է փոխենք մեր հայացքներն ու տեսակետերը, գտնենք ու վերացնենք այս ատելության ու անհամաձայնությունների պատճառները: Հաճախ դրական եմ տրամադրվում այս ամենը հաղթահարելու ուղղությամբ, քանի որ «Նամակներ հանուն խաղաղության» ծրագրի նման ծրագրեր կան: Բոլորին խաղաղության ու ընկերության հրավեր եմ ուղարկում՝ ոչ թե ատելության: Այլևս չեմ ուզում խուսափել խոսելուց որևէ մեկի հետ նրա հայ լինելու պատճառով, չեմ ուզում, որ նրա ազգությունը ստվեր գցի իմ մտքերի վրա: Իրականում, իմ կողմից երբեք նման բան տեղի չի ունեցել: Ինձ համար ազգությունը, կրոնը, ռասան ու տարբերությունները երբեք խնդիր չեն եղել: Ես շատ երկրներում ծանոթներ ունեմ:

Մարդկանց պետք է սիրել իրենց մտքերի համար, մնացած բաները արգելք չեն: Կարծում եմ՝ դու էլ ես ինձ պես մտածում: Իսկ քո կարծիքով ի՞նչ է խաղաղությունը: Քեզ համար մարդկանց ազգությունը կարո՞ղ է խոչնդոտ հանդիսանալ, որպեսզի նրանք գրչակից ընկերներ դառնան: Կցանկանայի՞ր հետագայում նույնպես մասնակից լինել Խաղաղության կառուցմանը (որը դու հենց հիմա անում ես):

Հանուն ապագայի, լեցուն խաղաղությամբ:

Ամենանվիրական մաղթանքներով՝

Ֆուադ